Գայանե Թովմասյան
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դասախոս,
տնտեսագիտության թեկնածու

«COVID–19»–Ի ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎՐԱ

Զբոսաշրջիկների թվաքանակը Հայաստանում վերջին տարիներին դրսևորել է աճի միտումներ: Հոդվածում ներկայացվել է զբոսաշրջության ոլորտի հիմնական վիճակագրական տվյալները՝ ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը և վճարային հաշվեկշռի ցուցանիշներն ըստ եռամսյակների, ներքին զբոսաշրջիկների թվաքանակը, իրականացված մարքեթինգային հիմնական քայլերը Հայաստանում: Կատարված վերլուծությունները վկայում են, որ զբոսաշրջությունը Հայաստանում ապագա տարիներին կունենար աճի միտումներ, եթե չլիներ COVID–19–ի տարածումը, ինչը կրում է համաշխարհային բնույթ, և Հայաստանը չի կարող զերծ մնալ այդ ամենից: Հոդվածում ներկայացվել է COVID–19–ի հնարավոր բացասական ազդեցությունն ինչպես ՀՀ, այնպես էլ այլ երկրների զբոսաշրջության ոլորտի վրա, քննարկվել են մի շարք երկրների և Հայաստանի ձեռնարկած միջոցառումները համավարակի հնարավոր բացասական հետևանքների մեղմման նպատակով, կատարվել են նաև որոշակի նախնական կանխատեսումներ:

Հիմնաբառեր. զբոսաշրջություն, մարքեթինգ, հյուրանոց, վճարային հաշվեկշիռ, COVID–19, կանխատեսում:

Ներածություն

Համաշխարհային տնտեսության վրա զբոսաշրջության հարաճուն ազդեցությունը մշտապես եղել է տարբեր հետազոտողների և կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Բավական է միայն նշել, որ 2018

թ. զբոսաշրջության համախառն ազդեցությունը համաշխարհային ՀՆԱ-ում կազմել է 10.4% կամ 8.8 տրիլիոն ԱՄՆ դոլար՝ ապահովելով 319 մլն աշխատատեղ (Travel & tourism economic impact 2019, World, p. 1): Ըստ ճանապարհորդությունների և զբոսաշրջության համաշխարհային խորհրդի տվյալների՝ 2018 թ. զբոսաշրջության համախառն ազդեցությունը ՀՀ ՀՆԱ-ում կազմել է 14.1% կամ 868,7 մլրդ դրամ՝ ապահովելով ընդհանուր զբաղվածության 12.5%-ը կամ 137000 աշխատատեղ (Armenia, 2019 annual research: key highlights):

Վերջին տարիներին ՀՀ զբոսաշրջության զարգացման միտումները թույլ էին տալիս ենթադրել, որ 2020 թ. նույնպես զբոսաշրջությունը Հայաստանում կգրանցի աճի բարձր տեմպեր: Իհարկե, այս սցենարը շատ իրատեսական կլիներ, եթե 2020թ. սկզբին ողջ աշխարհով մեկ չտարածվեր թագավարակը կամ COVID-19-ը, ինչը զգալի վնասներ է հասցնում համաշխարհային զբոսաշրջությանը:

Հետազոտության մեթոդը

Հետազոտության նպատակն է վերլուծել COVID-19-ի հնարավոր բացասական ազդեցությունը ՀՀ զբոսաշրջության ոլորտի վրա: Հետազոտության օբյեկտը զբոսաշրջության ոլորտն է ՀՀ-ում, առարկան՝ համավարակի ազդեցության գնահատումը զբոսաշրջության զարգացման վրա:

Հետազոտությունում օգտագործվել են վերլուծության և համադրության, միկրո և մակրո վերլուծության, վիճակագրական վերլուծության և կանխատեսման արտարկման մեթոդները: Հետազոտությունն իրականացնել է մինչև ապրիլի 7-ը առկա տվյալների հիման վրա, սակայն որոշ վերլուծություններ և գնահատականներ թարմացվել են 2020թ. մայիսի 1-ի դրությամբ:

Արդյունքներ և քննարկում

Զբոսաշրջության առկա վիճակը և զարգացման միտումները ՀՀ-ում

Մինչ COVID-19-ի ազդեցության վերլուծությունը, հարկ է ներկայացնել ՀՀ զբոսաշրջության ոլորտում վերջին տարիներին գրանցված զարգացման տեմպերը: Այսպես, ըստ ՀՀ ՎԿ տվյալների՝ ***2019թ. ՀՀ են ժամանել 1894377, իսկ ՀՀ-ից մեկնել են 1867888 զբոսաշրջիկներ***: Նախորդ տարվա համեմատ ժամանողների թվաքանակն աճել է 14.7%-ով (ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվար-դեկտեմբերին, էջ՝ 139):



Գծապատկեր 1. ՀՀ ներգնա և արտագնա զբոսաշրջիկների թվաքանակը, 2009–2019թթ.

Աղբյուրը՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի մասին տարեկան հրապարակումներ, 2010–2020թթ.

Այժմ դիտարկենք 2019թ. զբոսաշրջային այցելություններն ըստ եռամսյակների և դա համեմատենք նախորդ տարվա հետ (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

ՀՀ ներգնա և արտագնա զբոսաշրջիկների թվաքանակը 2018–2019թթ., մարդ

	2018 Q1	2018 Q2	2018 Q3	2018 Q4	2019 Q1	2019 Q2	2019 Q3	2019 Q4
Ժամանել են ուղևորներ, որոնք ըստ ՋՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ	346,458	339,521	589,230	376,573	364,489	405,566	689,097	435,225
Մեկնել են ուղևորներ, որոնք ըստ ՋՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ	300,832	310,111	537,598	474,250	317,891	366,917	627,474	555,606

Աղբյուրը՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի մասին եռամսյակային հրապարակումներ, 2018–2019թթ.

2019թ. առաջին եռամսյակում Հայաստան է այցելել 364489 մարդ, ինչը 2018թ. առաջին եռամսյակի համեմատությամբ աճել է 5,2%-ով:

2019թ. երկրորդ եռամսյակում Հայաստան է այցելել 405566 մարդ, ինչը 2018թ. երկրորդ եռամսյակի համեմատությամբ աճել է շուրջ 19,5%-ով:

2019թ. երրորդ եռամսյակում Հայաստան է այցելել 689097 մարդ, ինչը 2018թ. երրորդ եռամսյակի համեմատությամբ աճել է շուրջ 17%-ով:

2019թ. չորրորդ եռամսյակում Հայաստան է այցելել 435225 մարդ, ինչը 2018թ. չորրորդ եռամսյակի համեմատությամբ աճել է շուրջ 16%-ով:

Եթե դիտարկենք նաև վճարային հաշվեկշռի ճանապարհորդության և մարդատար տրանսպորտի մեջ զբոսաշրջության հետ կապված ծառայությունների (զբոսաշրջային ծառայությունների) կրեդիտի թվերն ըստ եռամսյակների (Աղյուսակ 2), ապա կտեսնենք, որ 2019թ. առաջին եռամսյակում ՀՀ ներգնա զբոսաշրջիկները ծախսել են միջինը 737 դոլար (2018թ. առաջին եռամսյակում՝ 713 դոլար), 2019թ. երկրորդ եռամսյակում՝ 784 դոլար (2018թ. երկրորդ եռամսյակում՝ 717 դոլար), 2019թ. երրորդ եռամսյակում՝ 819 դոլար (2018թ. երրորդ եռամսյակում՝ 757 դոլար), 2019թ. չորրորդ եռամսյակում՝ 882 դոլար (2018թ. չորրորդ եռամսյակում՝ 751 դոլար), 2019թ. տարեկան միջինը կազմել է 810 դոլար, 2018թ. տարեկան միջինը՝ 738 դոլար: Այսպիսով, 2019թ. մեկ զբոսաշրջիկի ծախսած միջին գումարը անցյալ տարվա համեմատ աճել է:

Եթե դիտարկենք զբոսաշրջային այցերի ցուցանիշներն ըստ նպատակի (աղյուսակ 3), ապա Հայաստան հիմնականում այցելում են հանգստի և ժամանցի, այնուհետև՝ գործնական նպատակներով: Նշենք, որ բերված տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին:

ՀՀ այցելած ներգնա զբոսաշրջիկները մեծամասամբ եղել են ՌԴ-ից, Գերմանիայից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, Իրանից:

2019թ. աճել է նաև ՀՀ ներքին զբոսաշրջիկների թվաքանակը՝ նախորդ տարվա համեմատ 41.4 %-ով (աղյուսակ 4): Ներքին զբոսաշրջիկների մեջ գերակշիռ մաս են կազմում հանգստի և ժամանցի նպատակով ճամփորդող զբոսաշրջիկները:

Հայաստանի ճանաչելիության բարձրացման նպատակով նախորդ տարվա ընթացքում Զբոսաշրջության կոմիտեի կողմից Հայաստան են հրավիրվել ավելի քան 50 ԶԼՄ ներկայացուցիչներ և հայտնի բլոգերներ տարբեր թիրախային շուկաներից (մասնավորապես՝ Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա, Շվեյցարիա, Իսրայել, ԱՄՆ, Լեհաստան): Հայաստանը մասնակցել է 4 միջազգային ցուցահանդեսների՝ Գերմանիայում, Փարիզում, Սինգապուրում, Լոնդոնում: Զբոսաշրջության կոմիտեի նախաձեռնությամբ իրականացվել է «Վարչապետն է քո զբոսավարը» մարքեթինգային արշավը, որը լուսաբանվել է տեղական և ընտրված երկրների լրատվամիջոցների կողմից: 2019թ. Համաշխարհային բանկի «Տեղական տնտեսություն և ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի միջոցներով բարեկարգվել են մի շարք զբոսաշրջային վայրեր՝ Գառնու քարերի սիմֆոնիան, Գյումրիի Կումայրի թաղամասի մի հատվածը, Տաթևի և Ստեփանավանի Դենդրոպարկի ճանապարհները, այս պահին բարեկարգվում է Խոր Վիրապի շրջակայքը: Բարեկարգվող զբոսաշրջային վայրերի թվում կլինեն Դվինի հնագիտական արգելավայրը, Գորիս քաղաքի պատմական փողոցները և Հին Գորիս քարանձավային քաղաքը (Առաջին ձեռքից. 2019-ը զբոսաշրջության համար, 2019):

Աղյուսակ 2.

ՀՀ վճարային հաշվեկշռի որոշ ցուցանիշներ, 2018-2019թթ., մլն ԱՄՆ դոլար

	2018Q1	2018Q2	2018Q3	2018Q4	2018	2019Q1	2019Q2	2019Q3	2019Q4	2019
ճանապարհորդություն	4.21	-18.40	-31.88	-151.5	-197.6	28.9	32.1	43.3	-64.9	39.3
կրեդիտ	247.53	238.61	439.83	281.9	1207.87	268.7	315.4	561.1	382.7	1528.0
դեբետ	243.31	257.01	471.71	433.4	1405.43	239.9	283.3	517.9	447.6	1488.7
Գործնական	-25.25	-29.75	-40.94	-34.9	-130.84	-22.5	-26.4	-36.4	-25.3	-110.6
կրեդիտ	23.79	24.49	45.15	32.9	126.33	24.0	30.1	53.7	41.2	149.1
դեբետ	49.04	54.24	86.09	67.8	257.17	46.5	56.5	90.1	66.5	259.6
Անձնական	29.46	11.35	9.05	-116.6	-66.74	51.3	58.5	79.6	-39.6	149.9
կրեդիտ	223.74	214.12	394.68	249.0	1081.54	244.7	285.3	507.4	341.5	1378.9
դեբետ	194.28	202.77	385.62	365.6	1148.27	193.4	226.8	427.8	381.1	1229.0
ճանապարհորդության և մարդատար տրանսպորտի մեջ զբոսաշրջության հետ կապված ծառայություններ	7.4	-0.9	-9.4	-129.6	-132.5	32.4	47.0	64.1	-42.2	101.3
կրեդիտ	246.9	243.5	446.2	282.9	1,219.5	268.7	317.8	564.6	383.8	1,534.9
դեբետ	239.5	244.4	455.6	412.5	1,352.0	236.3	270.9	500.4	426.0	1,433.6

Աղբյուրը՝ ՀՀ վճարային հաշվեկշիռ

Աղյուսակ 3.

ՀՀ ներգնա զբոսաշրջային այցերն ըստ նպատակի, 2017-2019թթ.

	2017թ.	2018թ.	2019թ.
ՀՀ ներգնա զբոսաշրջիկներ	1494779	1651782	1894377
ՀՏՕ-ներում հանգրվանած ներգնա զբոսաշրջիկներ	264702	307473	550289
որոնցից ըստ նպատակի՝	100%	100%	100%
գործնական	23,9 %	27,3 %	15.9 %
հանգստի և ժամանցի	52,8 %	48,8 %	55.4 %
բուժման	0,2 %	1,4 %	0.5 %
այլ	23,1 %	22,5 %	28.2 %

Աղբյուրը՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվարին, էջ՝ 105,
ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ. հունվարին, էջ՝ 112-113

Աղյուսակ 4.

ՀՀ ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի, 2017-2019թթ.

	2017թ.	2018թ.	2019թ.
ՀՀ ներքին զբոսաշրջիկներ	1086707	1092322	1544600
որոնցից ըստ նպատակի՝	100%	100%	100%
գործնական	23.3	19.0	18.2
հանգստի և ժամանցի	68.3	71.6	72.0
կրթության	-	-	0.2
բուժման	4.0	5.3	3.4
այլ	4.4	4.1	6.2

Աղբյուրը՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ. հունվարին, էջ՝ 115, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվարին, էջ՝ 106

2020թ. ապրիլի 7-ի դրությամբ www.armenia.travel կայքը հասանելի է անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն լեզուներով, ինստագրամում էջն շուրջ 60000 հետևորդ, իսկ ֆեյսբուքում՝ 106000-ից ավելի հետևորդ և 105000-ից ավելի հավանություն:

ՀՀ զբոսաշրջության կոմիտեի կողմից մշակվել են նաև Զբոսաշրջության մասին նոր օրենքի և Զբոսաշրջության զարգացման 2020-2030թթ. ռազմավարությունների նախագծերը, որոնք դեռ չեն ընդունվել: 2020թ. ընթացքում կստացվեն նաև սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի փորձարկման նախնական տվյալները, ինչը թույլ կտա ավելի մանրամասն վիճակագրական տեղեկատվություն ունենալ ներգնա զբոսաշրջիկների սեռի, տարիքի, քաղաքացիության, կրկնական այցելության վերաբերյալ:

Բերված տվյալները հիմք էին տալիս ենթադրել, որ 2020թ. ևս զբոսաշրջությունը Հայաստանում պետք է գրանցեր աճի բարձր տեմպեր: Սակայն 2020թ. սկզբին ամբողջ աշխարհով տարածվող համավարակը զգալի վնասներ է հաղորդում համաշխարհային զբոսաշրջությանը:

COVID-19-ի ազդեցությունը համաշխարհային զբոսաշրջության վրա

Դեռևս 2020թ. մարտի սկզբին Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունը կանխատեսել էր համաշխարհային զբոսաշրջիկների թվաքանակի նվազում 1-3%-ով (2019 թ. կազմել է 1461 միլիոն, իսկ 2020 թ. կանխատեսվում էր 1416-1446 միլիոն մարդ), ինչի հետևանքով զբոսաշրջիկների կողմից կատարվող ծախսերի կորուստը համաշխարհային մասշտաբով կկազմեր 30-50 մլրդ եվրո (Impact assessment of the COVID-19 outbreak on international tourism, UNWTO, 2020): Ավելի ուշ ԶՀԿ-ն թարմացրեց իր կանխատեսումները, ըստ որի՝ ***միջազգային զբոսաշրջային այցելությունները 2020թ. կկրճատվեն 20-30%-ով, իսկ զբոսաշրջային եկամուտները՝ 300-450 մլրդ դոլարով*** (International tourist arrivals could fall by 20-30% in 2020):

Ըստ ԶՀԿ-ի ապրիլի 28-ի տվյալների՝ աշխարհի բոլոր երկրներն ունեն

ճանապարհորդության սահմանափակումներ: Երկրների.

- 45 տոկոսն ամբողջությամբ կամ մասնակի փակել է իր սահմանները զբոսաշրջիկների համար. «Ուղևորներին թույլ չեն տալիս մուտք գործել»,
- 30 տոկոսն ամբողջությամբ կամ մասնակիորեն դադարեցրել (հետաձգել) է միջազգային չվերթերը. «Բոլոր չվերթերը դադարեցված են»,
- 18 տոկոսն արգելում է մուտքը հատուկ ծագման երկրներից ուղևորների կամ այդ վայրերի տարանցիկ ուղևորների համար,
- 7 տոկոսը կիրառում է տարբեր միջոցառումներ, ինչպիսիք են կարանտինը կամ ինքնամեկուսացումը 14 օրով և մուտքի արտոնագրային միջոցառումները (COVID – 19 related travel restrictions, a global review for tourism, second report as of 28 April 2020):

2020թ. մայիսի սկզբին ՋՀԿ-ն հրապարակեց առաջին եռամսյակի տվյալները, ըստ որի զբոսաշրջային այցելությունների թվաքանակն աշխարհում կրճատվել է 22%-ով (ընդ որում միայն մարտ ամսին՝ 57%-ով), ինչը կազմում է 67 միլիոն պակաս այցելություն և 80 միլիարդ պակաս եկամուտ 2019թ. առաջին եռամսյակի համեմատ: Հաշվի առնելով փակ սահմանները և ճանապարհորդելու սահմանափակումները՝ ՋՀԿ-ն երեք սցենար է դիտարկում, ըստ որի զբոսաշրջային այցելությունները կնվազեն 58-78%-ով: Ըստ առաջին սցենարի, եթե ազգային սահմանները բացվեն և ճանապարհորդելու սահմանափակումները հանվեն հուլիսի սկզբից, ապա զբոսաշրջային այցելությունների անկումը տարվա կտրվածքով աշխարհում կկազմի 58%, ըստ երկրորդ սցենարի, եթե սահմանափակումները հանվեն սեպտեմբերի սկզբից, ապա զբոսաշրջային այցելությունների անկումը տարվա կտրվածքով կկազմի 70%, և ըստ երրորդ սցենարի, եթե սահմանափակումները հանվեն դեկտեմբերի սկզբից, ապա զբոսաշրջային այցելությունների անկումը տարվա կտրվածքով կկազմի 78% (UNWTO World Tourism Barometer, 2020 Special focus on the Impact of COVID-19) : Ըստ վերանշյալ սցենարների՝ ***2020թ. զբոսաշրջային այցելություններն աշխարհում կարող են կրճատվել 850-1140 մլն-ով՝ կազմելով 320-610 մլն:*** Հարկ է նշել, որ սրանք կանխատեսումներ չեն և հիմնված են երկրների կողմից ազգային սահմանների բացման հնարավորությունների վրա, ուստի անընդհատ կարող են փոփոխվել:

ՋՀԿ-ն նշել է նաև զբոսաշրջությունից ստացվող եկամուտների կրճատման համապատասխան սցենարներ՝ 62-79%-ով կամ 910-1170 մլրդ դոլարով, այսինքն՝ ***միջազգային զբոսաշրջությունից եկամուտները կարող են կազմել 310-570 մլրդ դոլար***՝ նախորդ տարվա 1,5 տրիլիոն դոլարի դիմաց: Ըստ ՋՀԿ-ի՝ զբոսաշրջության 100-120 մլն ուղղակի աշխատատեղ կորստի վտանգի առջև են (UNWTO World Tourism Barometer, 2020 Special focus on the Impact of COVID-19) :

Օդային փրանսպորտի արդյունաբերության եկամտի նվազումը COVID-19-ի հետևանքով, ըստ IATA-ի նախնական կանխատեսումների,

կկազմի 252 մլրդ դոլար (COVID-19, Cash burn analysis), իսկ մինչ COVID-19-ի տարածումը օդային ուղևորափոխադրումից եկամուտն ակնկալվում էր 581 մլրդ դոլար, իսկ օդային ուղևորների թվաքանակը՝ 4.72 մլրդ (Coronavirus: impact on the aviation industry worldwide – Statistics & Facts):

COVID-19-ով պայմանավորված՝ միջազգային օլիմպիական կոմիտեի որոշմամբ ամառային օլիմպիական խաղերը, որոնք պետք է անցկացվեին Տոկիոյում՝ 2020 թ. հուլիսի 24-ից օգոստոսի 9-ը, մեկ տարով հետաձգվեցին (Tokyo 2020 Olympic torch relay postponed, 2020): Նույն կերպ, ՈՒԵՖԱ-ի որոշմամբ Եվրոպայի ֆուտբոլի 2020 թ. առաջնությունը հետաձգվեց մեկ տարով և կանցկացվի 2021 թ. հունիսի 11-ից հուլիսի 11-ը (UEFA postpones EURO 2020 by 12 months, 2020): Սա ենթադրում է սպորտային զբոսաշրջիկների թվի էական կրճատում 2020 թ.:

Զբոսաշրջության և ճանապարհորդությունների համաշխարհային խորհուրդը որոշ առաջարկություններ է ներկայացրել երկրների կառավարություններին ճգնաժամից հետո արագ վերականգնման համար՝ կապված վիզայի ռեժիմի դյուրացման, հարկաբյուջետային քաղաքականության իրականացման (նվազեցնել կամ հանել օդի, հյուրանոցների և այլ հարկերը), խթաններ տրամադրել բիզնեսին, հատկապես ՓՄՁ-ներին՝ բիզնեսի շարունակականությունը պահպանելու համար, աջակցել դեստինացիաներին՝ մեծացնելով մարքեթինգի վրա կատարվող ծախսերը, երբ նրանք պատրաստ կլինեն նորից զբոսաշրջիկներ ընդունել (Coronavirus puts up to 50 million Travel and Tourism jobs at risk says WTTC, 2020):

Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունը COVID-19-ի բացասական հետևանքները մեղմելու նպատակով կառավարություններին և մասնավոր հատվածին առաջարկել է հետևյալ 23 գործողություններն ըստ երեք ուղղությունների (UNWTO launches a call for action for tourism's COVID-19 mitigation and recovery).

- Ճգնաժամի կառավարում և ազդեցության մեղմում: Հիմնական առաջարկությունները վերաբերում են աշխատատեղերի պահպանմանը, ինքնազբաղված աշխատողներին աջակցմանը, իրացվելիության ապահովմանը, հմտությունների զարգացման խթանմանը և զբոսաշրջությանն առնչվող հարկերի, տուրքերի վերանայմանը:
- Խթանում և արագ վերականգնում: Առաջարկությունների այս շարքը շեշտում է ֆինանսական խթանման ապահովման կարևորությունը, ներառյալ բարենպաստ հարկային քաղաքականությունը, ճանապարհորդության սահմանափակումների վերացումը, հենց որ դա թույլ տա առողջապահական համակարգը, վիզաների դյուրացմանը նպաստելը, մարքեթինգի և սպառողների վստահության մեծացումը, որպեսզի արագացվի վերականգնումը: ԶՀԿ-ն նաև կոչ է անում զբոսաշրջությունը տեղակայել ազգային վերականգնման քաղաքականության և գործողությունների ծրագրերի կենտրոնում:
- Պատրաստվել վաղվան՝ շեշտը դնելով զբոսաշրջության եզակի կարողությունների վրա՝ որպես տեղական և ազգային աճի առա-

ջատարի, դիվերսիֆիկացնել շուկաները, ապրանքներն ու ծառայությունները, ներդրումներ անել մարդկային կապիտալում և տաղանդների զարգացման, ինտելեկտուալ համակարգերի և թվային տրանսֆորմացիայի մեջ: Պետք է առավելագույնս ուշադրություն դարձնել ոլորտի ունեցած ներդրման վրա Կայուն զարգացման օրակարգի կատարման գործում և ստեղծված ճգնաժամից դասեր քաղել: Հիմնական կոչը կառավարություններին և մասնավոր հատվածին է՝ ունենալ պատրաստի պլաններ և օգտագործել այս հնարավորությունը շրջանաձև տնտեսությանն անցնելու համար (Supporting jobs and economies through travel & tourism, A Call for Action to Mitigate the Socio-Economic Impact of COVID-19 and Accelerate Recovery):

Թեև զբոսաշրջության վրա COVID-19-ի բացասական ազդեցությանը՝ որոշ մասնագետներ պնդում են, որ դա հնարավորություն է ոլորտի հետագա զարգացման համար: Չվերթերի կտրուկ նվազեցման և մի շարք ընկերությունների աշխատանքի դադարեցման արդյունքում կրճատվել են ածխածնի երկօքսիդի արտանետումները՝ հանգեցնելով օդի և ջրի որակի բարելավման (Durant I., 2020): Ածխածնի երկօքսիդի համաշխարհային արտանետումների 5%-ը բաժին է ընկնում զբոսաշրջությանը, որի 75%-ն առաջանում է տրանսպորտի հետևանքով (Transport-related CO2 emissions of the tourism sector, 2019): Սա, անշուշտ, դրական ազդեցություն կունենա բնական ռեսուրսների պահպանման վրա (հատկապես այն դեստինացիաների դեպքում, որտեղ զբոսաշրջիկների թվի հսկայական աճի հետևանքով նկատվում էր բնական ռեսուրսների որակի վատթարացում) և լավ ազդակ կարող է լինել ամբողջ աշխարհի համար առ այն, որ *զբոսաշրջության կայուն զարգացման քաղաքականության իրագործումն այլընտրանք չունի:*

Աշխարհի մի շարք երկրներ արդեն որոշակի միջոցառումներ են նախաձեռնել COVID-19-ի հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամը հաղթահարելու նպատակով:

Այսպես՝ Իտալիայի կառավարությունը, առաջնային համարելով աշխատողների պաշտպանությունը, պետք է վճարի նրանց աշխատավարձերի 80%-ը: Միաժամանակ, երկիրը 500 միլիոն եվրոյի հիմնադրամ է բացել՝ վերականգնելու ավիացիոն արդյունաբերության և «Alitalia»-ի կրած վնասները:

Հոնկոնգը զբոսաշրջության ոլորտում բիզնեսի շարունակականությունն ապահովելու նպատակով ստեղծել է զբոսաշրջային գործակալությունների հակահամաճարակային սուբսիդավորման հիմնադրամ, որի միջոցով մոտ 1350 զբոսաշրջային միջոցառումներ ֆինանսավորում են ստացել: Յուրաքանչյուր զբոսաշրջային գործակալություն կարող է ստանալ 80000 ԱՄՆ դոլարի միանվագ լրահատկացում, և զբոսաշրջային գործակալությունների 98%-ը գրանցվել է վճարման համար:

Ֆրանսիան ստեղծել է Համերաշխության հիմնադրամ՝ 2 միլիարդ եվրոյի չափով, որին կարող են դիմել զբոսաշրջության բազմաթիվ ընկեր-

ություններ, որոնք բավարարում են հետևյալ չափանիշները. բիզնեսներ, որոնց գործունեությունը փակվել է (հիմնականում վերաբերում է սննդի ոլորտին (որոնք 160,000 են), ոչ պարենային առևտրին (140,000), զբոսաշրջությանը (100,000)), ՓՄՁ-ներ, որոնք 2019 թվականի մարտի համեմատ կորցրել են շրջանառությունը 70%-ով, և 1 միլիոն եվրոյից քիչ շրջանառություն ունեցող ՓՄՁ-ներ:

Իսպանիայի կառավարությունը հայտարարել է զբոսաշրջային ոլորտի ընկերություններին (ներառյալ տրանսպորտային ընկերությունները, տաքսիները, հյուրանոցները, ռեստորանները, ավտոմեքենաների վարձույթի ընկերությունները, զբոսաշրջային գործակալությունները, թանգարանները և այլն) 400 միլիոն եվրոյի ֆինանսավորում հատկացնելու մասին (Իսպանիայի պաշտոնական վարկային ինստիտուտի՝ ICO-ի երաշխիքով): Միջոցները գործում են որպես 4 տարվա վարկ, ֆիքսված տոկոսադրույքով (առավելագույնը՝ 1.5%), որի դեպքում ICO-ն երաշխավորում է վարկային կազմակերպություններին՝ իրենց հաճախորդների ռիսկի 50%-ի չափով: Կառավարությունը նաև 200 միլիարդ եվրոյի փաթեթ է գործարկել, որը կօգնի ընկերություններին՝ պաշտպանելու աշխատողներին և ճգնաժամից տուժած մյուս խոցելի խմբերին:

Պորտուգալիայի կառավարությունը ձեռնարկել է ավելի քան 30 նախաձեռնություն՝ ուղղված աշխատողների պաշտպանությանը և COVID-19-ի տնտեսական ազդեցության մեղմմանը՝ հարկաբյուջետային «ընդմիջումներով» և իրացվելիության ներարկմամբ: Կառավարությունը հատուկ շեշտադրել է ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտը՝ ստեղծելով 60 միլիոն եվրոյի վարկային գիծ ոլորտի միկրոբիզնեսների համար և համագործակցելով «Turismo de Portugal»-ի հետ՝ ազգային կարողությունները խթանելու համար (Covid-19 Related Policy Shifts Supportive of Travel & Tourism Sector, 2020):

COVID-19-ի ազդեցությունը ՀՀ զբոսաշրջության վրա

2020թ. փետրվարի 23-ին կորոնավիրուսի տարածման հետ կապված ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց փակել ՀՀ սահմանը Իրանի հետ, իսկ Չինաստանի քաղաքացիների համար փետրվարի 1-ից կասեցվել է ազատ վիզայի ռեժիմը: Իրանից ՀՀ ժամանած մարդկանց թվաքանակը 2019թ. կազմել է 114811, իսկ Չինաստանից՝ 14416 մարդ (ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվար-դեկտեմբերին, էջ՝ 256): 2018թ. ժամանած Իրանցի զբոսաշրջիկները կազմել են ընդհանուր զբոսաշրջիկների 6.8%-ը՝ այսինքն 112321 մարդ, իսկ 2019թ.՝ 5.0%-ը կամ 94719 մարդ: Ընդ որում, մարտի 21-ից իրանցիները նշում են Նովրուզը, և այդ ժամանակահատվածում սովորաբար մեծանում էր իրանցի զբոսաշրջիկների հոսքը Հայաստան:

Զբոսաշրջային գործակալությունները նշում են, որ կորոնավիրուսի հետ կապված՝ միջազգային զբոսաշրջիկները փետրվար ամսից սկսած չեղարկել են Հայաստանի հյուրանոցային տնտեսության օբյեկտներում իրենց կողմից նախօրոք կատարված ամրագրումները մարտ-ապրիլ ամիսների

համար (Կորոնավիրուսի պատճառով եվրոպացի հազարավոր զբոսաշրջիկներ չեղարկել են հայաստանյան հյուրանոցներում մարտ–ապրիլի համար արված ամրագրումները, 2020):

ՀՀ կառավարության 2020թ. մարտի 16–ի 298–Ն որոշմամբ ՀՀ–ում 2020թ. մարտի 16–ի ժամը 18:30–ից սկսած մինչև 2020թ. ապրիլի 14–ը ժամը 17:00–ն ներառյալ՝ ժամկետով հայտարարվեց արտակարգ դրություն (ՀՀ կառավարության որոշում, 16 մարտի 2020, 298 – Ն), որն այնուհետև երկարաձգվեց:

Հաշվի առնելով վերոնշյալ զարգացումները՝ որոշ ավիաընկերություններ որոշում են կայացրել ժամանակավորապես չեղարկել իրենց կողմից դեպի ՀՀ և ՀՀ–ից դուրս մի շարք ուղղությունների սպասարկումը (ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ հղմամբ) (Արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ որոշ ավիաընկերություններ ..., 2020): Նշենք նաև, որ այսօր աշխարհի մի շարք երկրներում է գործում արտակարգ իրավիճակ, փակ են սահմանները այլ երկրների քաղաքացիների մուտքի համար, ավիաընկերությունները չեղարկել են չվերթերը մի շարք երկրներում: Ուստի, կորոնավիրուսով պայմանավորված վնասները զբոսաշրջության ոլորտում կրում են համաշխարհային բնույթ, և Հայաստանը չի կարող զերծ մնալ այդ ամենից:

ՀՀ–ում 2020 թ. մարտի 16–ին Հայաստանի հյուրանոցների ասոցիացիան դիմեց ՀՀ կառավարությանը՝ հարկային պարտավորությունների կատարումը հետաձգելու խնդրանքով (Հայաստանի հյուրանոցների ասոցիացիան դիմել է Նիկոլ Փաշինյանին, 2020): Բացի այդ, «Տուրիզմ Արմենիա» ասոցիացիան ևս դիմել է Կառավարությանը՝ առաջարկելով ձեռնարկել որոշակի միջոցներ (Զբոսաշրջային ընկերությունները կրճատում են աշխատողներին ..., 2020):

ՀՀ կառավարությունը 2020թ. մարտի 26–ի նիստում հաստատեց COVID–19–ի հետևանքների հակազդման միջոցառումների համապարփակ ծրագիրը (ՀՀ կառավարության 2020թ. մարտի 26–ի N 354 – Լ որոշման հավելված) և տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումների 5 փաթեթները, մարտի 30–ին հաստատվեց ևս 3 փաթեթ, ապրիլի 2–ին՝ մեկ փաթեթ, այնուհետև ևս մի քանիսը (Կառավարության որոշումներ):

Իհարկե, դեռ վաղ է հստակ գնահատել, թե որքանով բավարար կլինեն վերոնշյալ միջոցառումները զբոսաշրջային ոլորտի կազմակերպությունների համար, և թե վերջիններիս վնասը որքան կկազմի իրականում:

Եթե ըստ ՋՀԿ նախնական գնահատականի զբոսաշրջիկների թվաքանակի նվազումը կազմեր 1–3% նաև ՀՀ–ում, ապա դա կկազմեր 18.944–56.831 զբոսաշրջիկ (2019 թ. ՀՀ ներգնա 1.894.377 զբոսաշրջիկների թվի 1–3%–ը): Սակայն, այս կանխատեսումն արվել է այն ժամանակ, երբ դեռ մի շարք երկրներ չէին անցել արտակարգ դրության և ամբողջ աշխարհում չվերթերը չեղարկված չէին: Ուստի, ներկա պայմաններում զբոսաշրջիկների թվաքանակի 1–3% անկումը կարելի էր համարել չարյաց փոքրագույնը: 2020թ. առաջին եռամսյակում ՀՀ ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը

կազմել է 311264 մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 14,6%-ով (ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ. հունվար-մարտին): Հաշվի առնելով շարունակվող սահմանափակումները և չեղարկված չվերթերը՝ կարելի է ենթադրել, որ 2020թ. երկրորդ եռամսյակում ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի կրճատումն ավելի մեծ կլինի:

Եթե նախնական գնահատականներն արվեն ըստ ՋՀԿ որոշ տվյալների՝ այն է՝ զբոսաշրջիկների թվաքանակի 20-30% կրճատում և ըստ ՋՀԿ վերջին սցենարների՝ 58-78% կրճատում, ուրեմն ՀՀ ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը 2020թ. կկազմի 416763-1515502 զբոսաշրջիկ:

Հաշվի առնելով վերջին տարիներին ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի աճը՝ կանխատեսման արտարկման մեթոդով հաշվարկել ենք մինչև 2025թ. զբոսաշրջիկների թվաքանակի աճի հնարավոր տեմպերը՝ ըստ տարբեր սցենարների (գծապատկեր 2): Իհարկե, եթե չլիներ համավարակը, ապա կանխատեսումները կիրականանային աճի սցենարներով, սակայն ցավոք 2020թ. կունենանք զբոսաշրջիկների թվաքանակի կրճատում:



	2019	2020	2021	2022	2023	2024	2025
2001-2019թթ. միջինը, 18.3%	1894377	2241048	2651160	3136322	3710269	4389248	5192481
վերջին 3 տարիների միջինը, 14.6%	1894377	2170956	2487916	2851151	3267419	3744463	4291154
վերջին 5 տարիների միջինը, 9.7%	1894377	2078132	2279710	2500842	2743424	3009536	3301461
վերջին 7 տարիների միջինը, 10.3%	1894377	2089498	2304716	2542102	2803938	3092744	3411297
2009-2019թթ. միջինը, 11.9%	1894377	2119808	2372065	2654341	2970207	3323662	3719178
2001-2019թթ. նվազագույն աճը, 5.1%	1894377	1990990	2092531	2199250	2311412	2429294	2553187
2001-2019թթ. նվազագույնը, -1.0%	1894377	1875433	1856679	1838112	1819731	1801534	1783518
կանխատեսվող անկում, 20%	1894377	1515502					
կանխատեսվող անկում, 30%	1894377	1326064					
կանխատեսվող անկում, 58%	1894377	795638					
կանխատեսվող անկում, 70%	1894377	568313					
կանխատեսվող անկում, 78%	1894377	416763					

Գծապատկեր 2. ՀՀ ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի կանխատեսումները, 2020-2025թթ.

Հաշվի առնելով այն, որ 2021թ. զբոսաշրջության ոլորտը կսկի կամաց-կամաց վերականգնվել, ուստի հետագա տարիների կտրվածքով անկման կանխատեսում չենք արել:

Իսկ թե իրականում նախորդ տարվա համեմատ ՀՀ ներգնա զբոսաշրջիկների թվաքանակն ինչքան կնվազի 2020թ., կախված է այն բանից, թե համաշխարհային մասշտաբով որքան արագ կհաջողվի կանխել վարակի

տարածումը, և երբ կբացվեն փակ սահմաններն ու կվերականգնվեն չվերթերը: Իհարկե, անիմաստ է այդ ամենից հետո ակնկալել զբոսաշրջիկների թվաքանակի շատ արագ ներհոսք, ուստի ոլորտի զարգացման տեմպերի վերականգնումն ավելի դանդաղ կկատարվի:

Եզրակացություն

Մնում է հուսալ, որ վարակի տարածման տեմպերը կնվազեն և խնդիրը կունենա կարճաժամկետ բնույթ, ու 2021թ. զբոսաշրջության ոլորտը կսկսի կամաց-կամաց աշխուժանալ: Հակառակ դեպքում, եթե իրավիճակն ավելի սրվի և երկարի, Հայաստանում վերջին տարիներին արագ տեմպերով զարգացող զբոսաշրջության ոլորտը, որի համախառն ազդեցությունը ՀՆԱ-ում 14% է, կարող է հայտնվել լուրջ ճգնաժամային իրավիճակում, ինչը բազմարկչի էֆեկտով կազդի տնտեսության այլ ոլորտների վրա ևս:

Փակ սահմանների և տեղաշարժի սահմանափակումների պայմաններում շատ երկրներ մտածում են զարգացնել ներքին զբոսաշրջությունը:

Արդեն ակնհայտ է, որ ՀՀ-ն վնասներ ունի ոչ միայն միջազգային, այլ նաև ներքին զբոսաշրջությունից: Ստեղծված սահմանափակումների պայմաններում 2020թ. առաջին կիսամյակում կկրճատվի նաև ՀՀ ներքին զբոսաշրջիկների թվաքանակը՝ նախորդ տարվա համեմատ: Ներքին տեղաշարժի սահմանափակումների վերացման և անվտանգության կանոնների պահպանման պարագայում պետք է խթանել ներքին զբոսաշրջության զարգացումը: ՀՀ քաղաքացիների մեծ մասը, որոնք նախկինում գերադասում էին հանգստանալ արտերկրում, համաճարակի համաշխարհային վտանգի և տեղաշարժի սահմանափակումների պարագայում, կարող են հանգստանալ հայրենիքում: Այստեղ հարկ է դիտարկել նաև զբոսաշրջիկի հոգեբանությունը՝ շատերն իրենց ապահով կզգան իրենց երկրի սահմաններում, քանի որ վտանգի պարագայում կարող են ավելի հեշտ ու արագ օգտվել համապատասխան բժշկական ծառայություններից, քան արտերկրում:

Ներքին զբոսաշրջության խթանման համար անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ տարբեր ուղղություններով՝ մարքեթինգային միջոցառումներ, հատկապես համացանցով և սոցիալական ցանցերով, տարբեր տեսակի տուր փաթեթների մշակում՝ ներառելով զբոսաշրջության տարբեր տեսակներ՝ ռեկրեացիոն, էկո, ագրո, գաստրոնոմիական, սպորտային, արկածային, իրադարձային, և այլն: Որպես մարքեթինգային խթան կհանդիսանա նաև *Influencerմարքեթինգի* իրականացումը տարբեր հայ հայտնի մարդկանց մասնակցությամբ, որոնք կհանգստանան որևէ մարզում, կմասնակցեն որևէ զբոսաշրջային տուրի, և ուղղակի ու անուղղակի կերպով կգովազդեն այն: ՀՀ-ն ունի ներքին զբոսաշրջության զարգացման մեծ ներուժ, ՀՀ բոլոր մարզերը և մայրաքաղաքն ունեն զբոսաշրջային հսկայական ներուժ, ուստի այդ ներուժի հիման վրա կարող են կազմակերպվել տարբեր երթուղիներ՝ մեկտեղելով զբոսաշրջության տարբեր տեսակներ:

Ներքին զբոսաշրջության խթանումը ներկա պայմաններում կապահովի

նաև զբոսաշրջային ենթակառուցվածքների գործունեությունը մարզերում, կնպաստի մարզերում սոցիալ-տնտեսական կյանքի աշխուժացմանը:

Օգտագործված գրականություն

Արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ որոշ ավիաընկերություններ որոշում են կայացրել ժամանակավորապես չեղարկել իրենց կողմից դեպի ՀՀ և ՀՀ-ից դուրս որոշ ուղղությունների սպասարկումը, 2020, Առցանց՝ https://www.gov.am/am/news/item/14135/, Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

Առաջին ձեռքից. 2019-ը զբոսաշրջության համար, 2019, Առցանց՝ https://banks.am/am/news/interviews/18337?fbclid=IwAR3V5_lj_nSDSgxBTXMdcioYmzAx6yhX2y-rl6410lF6ej7QoC3ah9w1edX4, Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

Զբոսաշրջային ընկերությունները կրճատում են աշխատողներին, ուղարկում արձակուրդ. անհրաժեշտ է, որ գործադիրը փարբերվող լուծում գտնի ամենաշատը տուժած այս ոլորտի համար. «Տուրիզմ Արմենիա» ասոցիացիայի նախագահ, 2020, Առցանց՝ https://www.tert.am/am/news/2020/03/23/tourism/3243328, Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

Կորոնավիրուսի պատճառով եվրոպացի հազարավոր զբոսաշրջիկներ չեղարկել են հայաստանյան հյուրանոցներում մարտ-ապրիլի համար արված ամրագրումները, 2020, Առցանց՝ https://www.tert.am/am/news/2020/02/29/cancellation/3224005, Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

Հայաստանի հյուրանոցների ասոցիացիան դիմել է Նիկոլ Փաշինյանին, 2020. Առցանց՝ https://hraparak.am/post/91f2d3f666bd893c51511ef60bed4239, Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվար-դեկտեմբերին, էջ՝ 139, 256, 2019թ. հունվարին, էջ՝ 105, 106, 2020թ. հունվարին, էջ՝ 112-113, 115, 2020թ. հունվար-մարտին, էջ՝ 153 Առցանց՝
https://www.armstat.am/file/article/sv_12_19a_421.pdf,
https://www.armstat.am/file/article/sv_12_19a_6200.pdf,
https://www.armstat.am/file/article/sv_01_19a_421.pdf;
https://www.armstat.am/file/article/sv_01_19a_422.pdf,
https://www.armstat.am/file/article/sv_01_20a_421.pdf,
https://www.armstat.am/file/article/sv_01_20a_422.pdf,
https://www.armstat.am/file/article/sv_03_20a_421.pdf,
Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի մասին եռամսյակային և տարեկան հրապարակումներ, 2010-2020թթ., Առցանց՝ https://www.armstat.am, Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

ՀՀ վճարային հաշվեկշիռ, Արտաքին հատվածի վիճակագրություն, Առցանց՝ https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx, Վերջին մուտքը՝ 01.05.2020թ.

ՀՀ կառավարության որոշում, 16 մարտի 2020, 298 – Ն, *Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին,* Առցանց՝ https://www.e-gov.am/gov-decrees/item/33564/?fbclid=IwAR00jM_nHx8p74lNx-fEdItbpO0gAFu9aeZqpH-74o8FZK6dLkKv7W0gHTew, Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 26-ի N 354 – Լ որոշման հավելված, Առցանց՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/03/354-%D4%BC.pdf,

Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

Կառավարության որոշումներ, Առցանց՝ https://www.e-gov.am/gov-decrees/calendar/2020/04/, Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

Armenia, 2019 annual research: key highlights, World Travel and Tourism Council: Առցանց՝ https://www.wttc.org/economic-impact/country-analysis/country-data/, Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

Coronavirus puts up to 50 million Travel and Tourism jobs at risk says WTTC, 2020, Առցանց՝ https://www.wttc.org/about/media-centre/press-releases/press-releases/2020/coronavirus-puts-up-to-50-million-travel-and-tourism-jobs-at-risk-says-wttc, Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

Coronavirus: impact on the aviation industry worldwide – Statistics & Facts, Առցանց՝ https://www.statista.com/topics/6178/coronavirus-impact-on-the-aviation-industry-worldwide/, Վերջին մուտքը՝ 01.05.2020թ.

Covid-19 Related Policy Shifts Supportive of Travel & Tourism Sector, 2020: Առցանց՝ https://www.wttc.org/government-advice/, Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

COVID – 19 related travel restrictions, a global review for tourism, second report as of 28 April 2020, Առցանց՝ https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-04/TravelRestrictions%20-%2028%20April.pdf, Վերջին մուտքը՝ 01.05.2020թ.

COVID-19, Cash burn analysis, Առցանց՝ https://www.iata.org/en/iata-repository/publications/economic-reports/covid-19-cash-burn-analysis/, Վերջին մուտքը՝ 01.05.2020թ.

Durant I., (2020). *Tourism – A life line in free fall:* Առցանց՝ https://unctad.org/en/pages/newsdetails.aspx?OriginalVersionID=2312, Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

Impact assessment of the COVID-19 outbreak on international tourism, UNWTO, 2020, Առցանց՝ https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-03/UNWTO-Impact-Assessment-COVID19.pdf, Վերջին մուտքը՝ 01.05.2020թ.

International tourist arrivals could fall by 20-30% in 2020, Առցանց՝ https://www.unwto.org/news/international-tourism-arrivals-could-fall-in-2020, Վերջին մուտքը՝ 01.05.2020թ.

Supporting jobs and economies through travel & tourism, A Call for Action to Mitigate the Socio-Economic Impact of COVID-19 and Accelerate Recovery, World Tourism Organization (UNWTO), Madrid, Spain, 1 April 2020, Առցանց՝ https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-04/COVID19_Recommendations_English_1.pdf, Վերջին մուտքը՝ 01.05.2020թ.

Travel & tourism economic impact 2019, World, p. 1: Առցանց՝ https://www.wttc.org/economic-impact/country-analysis/country-data/, Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

Transport-related CO2 emissions of the tourism sector, Modelling results, UNWTO, 2019, p. 11, Առցանց՝ https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/9789284416660, Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

Tokyo 2020 Olympic torch relay postponed, 2020. Առցանց՝ https://www.olympic.org/news/tokyo-2020-olympic-torch-relay-postponed, Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

UEFA postpones EURO 2020 by 12 months, 2020: Առցանց՝ https://www.uefa.com/uefaeuro-2020/news/025b-0ef35fa07210-adb80b5eb2e7-1000--uefa-postpones-euro-2020/?iv=true, Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

UNWTO launches a call for action for tourism's COVID-19 mitigation and recovery,

Առցանց՝ https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-04/200401%20-%20Call%20for%20Action%20for%20Tourisms%20COVID-19%20EN.pdf, Վերջին մուտքը՝ 01.05.2020թ.

UNWTO World Tourism Barometer May 2020 Special focus on the Impact of COVID-19 (Summary), Առցանց՝ https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-05/Barometer%20-%20May%202020%20-%20Short.pdf, Վերջին մուտքը՝ 01.05.2020թ.

References

Artakarg iravichakov paymanavorvac՝ vorosh aviaynkerutyunner voroshum en kayacrel jamanakavorapes chexarkel irenc koxmic depi HH ev HH-ic durs vorosh uxxutyunneri spasarkumy / Due to the state of emergency, some airlines have decided to temporarily cancel their services to and from the Republic of Armenia, 2020, Online: https://www.gov.am/en/news/item/14135/, Accessed: 07.04.2020 (in Armenian)

Arajin dzerqic. 2019-y zbosashrjutyan hamar / From the first hand. 2019 for tourism, 2019, Online: https://banks.am/am/news/interviews/18337?fbclid=IwAR3V5_lj_nSDSgxBTXMdcioYmzAx6yhX2yrl6410lF6ej7QoC3ah9w1edX4, Accessed: 07.04.2020 (in Armenian)

Zbosashrjayin ynkerutyunnery krjatum en ashxatoxnerin, uxarkum ardzakurd. Anhrajesht e vor gorcadiry tarbervox lucum gtni amenashaty tujac ays volorti hamar. <<Turizm Armenia>> asociaciayi naxagah / Travel companies reduce employees, send to vacation. It is necessary for the executive to find a different solution for this most affected sphere. President of "Tourism Armenia" Association, 2020, Online: https://www.tert.am/en/news/2020/03/23/tourism/3243328, Accessed: 07.04.2020 (in Armenian)

Koronavirusi patjarov evropaci hazaravor zbosashrjikner chexarkel en hayastanyan hyuranocnerum mart-aprili hamar arvac amragrumnery / Thousands of European tourists canceled reservations in Armenian hotels for March-April due to coronavirus, 2020, Online: https://www.tert.am/en/news/2020/02/29/cancellation/3224005, Accessed: 07.04.2020 (in Armenian)

Hayastani hyuranocneri asociacian dimel e Nikol Pashinyanin / The Armenian Hotels Association applied to Nikol Pashinyan, 2020. Online: https://hraparak.am/post/91f2d3f666bd893c51511ef60bed4239, Accessed 07.04.2020. (in Armenian)

HH social-tntesakan vijaky 2019t. hunvar-dektemberin , 2019t. hunvarin, 2020t. hunvarin, 2020t. hunvar-martin, online: https://www.armstat.am/file/article/sv_12_19a_421.pdf, https://www.armstat.am/file/article/sv_12_19a_6200.pdf, https://www.armstat.am/file/article/sv_01_19a_421.pdf; https://www.armstat.am/file/article/sv_01_19a_422.pdf, https://www.armstat.am/file/article/sv_01_20a_421.pdf, https://www.armstat.am/file/article/sv_01_20a_422.pdf, https://www.armstat.am/file/article/sv_03_20a_421.pdf, / Socio-economic situation of the Republic of Armenia in 2019 January-December, 2019, 2020 January, 2020 January-March, (in Armenian)

HH social-tntesakan vijaki masin eramsyakayin ev tarekan hraparakumner, 2010-2020tt. / Quarterly and annualy publications on the socio-economic situation of the Republic of Armenia, 2010-2020, Online: https://www.armstat.am, Accessed: 07.04.2020. (in Armenian)

HH social-tntesakan vijaki masin tarekan hraparakumner, 2010-2020tt. / Annual publications on the socio-economic situation of the Republic of Armenia, 2010-2020, Online: https://www.armstat.am, Accessed: 07.04.2020. (in Armenian)

HH vjarayin hashvekshir, Artaqin hatvaci vijakagrutyun / Payment balance of the Republic of Armenia, Statistics of the Foreign Sector, Online: https://www.cba.am/en/SitePages/statexternalsector.aspx, Accessed: 01.05.2020 (in Armenian)

HH karavarutyan voroshum, 16 marti 2020, 298-N, *Hayastani Hanrapetutyunum artakarg drutyun haytararelu masin* / Decision of the Government of the Republic of Armenia, March 16, 2020, 298 – N On declaring a state of emergency in the Republic of Armenia. Online: https://www.e-gov.am/gov-decrees/item/33564/?fbclid=IwAR00jM_nHx8p74lNxfEdItbpO0gAFu9aeZqpH-74o8FZK6dLkKv7W0gHTew, Accessed: 07.04.2020 (in Armenian)

HH karavarutyan 2020t. marti 26-I N 354-L voroshman havelvac / Annex of the decision of 2020 March 26, N 354 – L of the Government of the Republic of Armenia, Online: https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/03/354-%D4%BC.pdf, Accessed: 07.04 .2020 (in Armenian)

Karavarutyan voroshumner / Government Decisions, Online: https://www.e-gov.am/gov-decrees/calendar/2020/04/, Accessed: 07.04.2020 (in Armenian)

Armenia, 2019 annual research: key highlights, World Travel and Tourism Council: Online: https://www.wttc.org/economic-impact/country-analysis/country-data/, Վերջին մուտքը՝ 07.04.2020թ.

Coronavirus puts up to 50 million Travel and Tourism jobs at risk says WTTC, 2020, Online: https://www.wttc.org/about/media-centre/press-releases/press-releases/2020/coronavirus-puts-up-to-50-million-travel-and-tourism-jobs-at-risk-says-wttc, Accessed: 07.04.2020թ.

Coronavirus: impact on the aviation industry worldwide – Statistics & Facts, Online: https://www.statista.com/topics/6178/coronavirus-impact-on-the-aviation-industry-worldwide/, Accessed: 01.05.2020թ.

Covid-19 Related Policy Shifts Supportive of Travel & Tourism Sector, 2020: Online: https://www.wttc.org/government-advice/, Accessed: 07.04.2020թ.

COVID – 19 related travel restrictions, a global review for tourism, second report as of 28 April 2020, Online: https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-04/TravelRestrictions%20-%2028%20April.pdf, Accessed: 01.05.2020թ.

COVID-19, Cash burn analysis, Online: https://www.iata.org/en/iata-repository/publications/economic-reports/covid-19-cash-burn-analysis/, Accessed: 01.05.2020թ.

Durant I., (2020). *Tourism – A life line in free fall.* Online: https://unctad.org/en/pages/newsdetails.aspx?OriginalVersionID=2312, Accessed: 07.04.2020թ.

Impact assessment of the COVID-19 outbreak on international tourism, UNWTO, 2020, Online: https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-03/UNWTO-Impact-Assessment-COVID19.pdf, Accessed: 01.05.2020թ.

International tourist arrivals could fall by 20-30% in 2020, Online: https://www.unwto.org/news/international-tourism-arrivals-could-fall-in-2020, Accessed: 01.05.2020թ.

Supporting jobs and economies through travel & tourism, A Call for Action to Mitigate the Socio-Economic Impact of COVID-19 and Accelerate Recovery, World Tourism Organization (UNWTO), Madrid, Spain, 1 April 2020, Online: https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-04/COVID19_Recommendations_English_1.pdf, Accessed: 01.05.2020թ.

Travel & tourism economic impact 2019, World, p. 1: Online: https://www.wttc.org/economic-impact/country-analysis/country-data/, Accessed: 07.04.2020թ.

Transport-related CO2 emissions of the tourism sector, Modelling results, UNWTO, 2019, p. 11, Online: https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/9789284416660, Accessed: 07.04.2020թ.

Tokyo 2020 Olympic torch relay postponed, 2020. Online: https://www.olympic.org/news/tokyo-2020-olympic-torch-relay-postponed, Accessed: 07.04.2020թ.

UEFA postpones EURO 2020 by 12 months, 2020: Online: https://www.uefa.com/uefaeuro-2020/news/025b-0ef35fa07210-adb80b5eb2e7-1000--uefa-postpones-euro-2020/?iv=true, Accessed: 07.04.2020թ.

UNWTO launches a call for action for tourism's COVID-19 mitigation and recovery, Online: https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-04/200401%20-%20Call%20for%20Action%20for%20Tourisms%20COVID-19%20EN.pdf, Accessed: 01.05.2020թ.

UNWTO World Tourism Barometer May 2020 Special focus on the Impact of COVID-19 (Summary), Online: https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-05/Barometer%20-%20May%202020%20-%20Short.pdf, Accessed: 01.05.2020թ.

Гаяне Товмасян

старший исследователь исследовательского центра ''АМБЕРД'' Армянского государственного экономического университета, Преподаватель Академии государственного управления РА, кандидат экономических наук

ОТРИЦАТЕЛЬНОЕ ВЛИЯНИЕ ''COVID-19'' НА СФЕРУ ТУРИЗМА В РА

Число туристов в Армении в последние годы растет. В статье представлены основные статистические данные туристического сектора: количество прибывающих туристов и квартальные показатели платежного баланса, количество внутренних туристов, основные маркетинговые шаги, реализуемые в Армении. Анализ показывает, что туризм в Армении имел бы тенденцию роста в ближайшие годы, если бы не глобальный характер распространения COVID-19, которого не избежать и Армении.

В статье обсуждается возможное негативное влияние COVID-19 на туризм в Армении и в других странах; обсуждаются меры, принятые рядом стран и Арменией, для смягчения возможных негативных последствий заражения и делаются некоторые предварительные прогнозы.

Ключевые слова: туризм, маркетинг, гостиница, платежный баланс, COVID-19, прогноз.

Gayane Tovmasyan
Senior Researcher at ''AMBERD'' Research Center of the Armenian State University of Economics, Lecturer at the Public Administration Academy of the Republic of Armenia, PhD in Economics

THE NEGATIVE IMPACT OF ''COVID-19'' ON TOURISM SPHERE OF THE RA

The number of tourists in Armenia has been growing in recent years. Therefore, the article presents the main statistics of the tourism sector: the number of incoming tourists and the quarterly balance of payments indicators, the number of domestic tourists, the main marketing steps implemented in Armenia. The analysis shows that tourism in Armenia would grow in the upcoming years if not the spread of COVID-19, which is a global problem, and Armenia cannot avoid it. The article discusses the possible negative impact of COVID-19 on tourism in Armenia and other countries, discusses measures taken by a number of countries and by Armenia to mitigate the possible negative consequences of COVID-19, and some preliminary predictions are made.

Key words: Tourism, marketing, hotel, payment balance, COVID-19, forecast.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2020թ. ապրիլի 7-ին, իսկ որոշ վերլուծություններ և գնահատականներ թարմացվել են 2020թ. մայիսի 1-ի դրությամբ:
Հոդվածը հանձնվել է գրախոսման 2020թ. ապրիլի 14-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության 2020թ. ապրիլի 22-ին: